

Հայտարարություն

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի N 25-Ն հրամանը՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը /այսուհետ՝ ՍԱՏԳ/ համագործակցության է հրավիրում մարզում, ՀՀ կառավարության 2015թ. հունիսի 4-ի N 582-Ն որոշման 5-րդ կետով հաստատված՝ իր սպասարկման տարածքում /այսուհետ՝ տարածաշրջան/ գործող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող պետական և համայնքային, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին /ներառյալ՝ ՀԿ-ներ, ոչ առևտրային կազմակերպություններ, այսուհետ Կազմակերպություններ/, ինչպես նաև ֆիզիկական անձանց, որոնք՝ միանալով սոցիալական համագործակցության համաձայնագրին /այսուհետ՝ Համաձայնագիր/, հայտնում են իրենց համաձայնությունը հետևյալի մասին՝

գործել Համաձայնագրի նպատակներին և սոցիալական աջակցության սկզբունքներին համապատասխան, գործադրել լավագույն ջանքերը Համաձայնագրում և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում ամրագրված դրույթներն իրագործելու համար:

Համաձայնագրին միանալու մասին «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված Կազմակերպությունների պաշտոնական գրությունները, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմումները, ներկայացվում են Արմավիրի ՍԱՏԳ /ք. Արմավիր/, որում նշվում է Համաձայնագրին ամբողջությամբ կամ վերապահումով միանալու մասին:

Արմավիրի ՍԱՏԳ-ն կազմակերպությունների գրությունները /ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմումները/ ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանց պատճենները ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ Համաձայնագրին միացած մարմինների և անձանց տվյալները պաշտոնական համացանցային կայք էջում տեղադրելու համար:

Համաձայնագրին միացող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն հետևյալ տվյալները՝

1.Մարմնի կամ կազմակերպության դեպքում՝ ա/ անվանումը, բ/ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման օրը, ամիսը, տարին, գրանցման համարը /բացառությամբ մարմինների/, գ/ փաստացի գործունեության հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, կայքի անվանումը/առկայության դեպքում/, դ/ ներկայացուցչի անունը, ազգանունը, ե/ իրականացված/վող/ ծրագրերը:

2.Ֆիզիկական անձանց դեպքում՝ ա/ազգանունը, անունը, բ/հաշվառման հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը, գ/ գործունեության նախընտրելի ոլորտը, դ/ կամավորական աշխատանքի տևողությունը/առկայության դեպքում/:

Տարածքային մարմինը Համաձայնագրին միանալու ցանկություն հայտնած և պահանջվող տվյալներ ներկայացնող կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին, նրանց տվյալները համապատասխան կայքում տեղադրելուց հետո տրամադրում է Համաձայնագրի 1 օրինակ՝ վավերացված Արմավիրի ՍԱՏԳ-ի պետի կողմից՝ յուրաքանչյուր էջը կնքված տարածքային մարմնի կնիքով:

Համաձայնագրին միանալու օր է համարվում տարածքային մարմին՝ այդ մասին գրությունը /դիմումը/ ներկայացնելու օրը:

Յուրաքանչյուր կողմ Համաձայնագրից մասնակցությունը հետ կանչելու պաշտոնական գրությունը/դիմումը/ ներկայացնում է տարածքային մարմին:

Կողմի մասնակցությունը Համաձայնագրին համարվում է դադարած կողմի՝ մասնակցությունը հետ կանչելու գրությունը /դիմումը/ տարածքային մարմին ներկայացնելու պահից:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն